ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ _____ առ " " _____ 2025թ.

«Սերգեյ Անանյան» ԱՁ

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-45/25-01/147 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Անանյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռելեների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-45/25» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Սերգեյ Անանյան» ԱՁ-ի միջև 2025 թվականի մայիսի 8-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-45/25-01/147 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ի 11-րդ չափաբաժնով սահմանված բլոկ-ռելեն Ձեր կողմից մատակարարված չէ:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:
- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Սերգեյ Անանյան» ԱՁ-ի միջև 2025

թվականի մայիսի 8-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-45/25-01/147 պայմանագիրը 11-րդ չափաբաժնի մասով և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (115 796 ՀՀ դրամ) և որակավորման (173 694 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
խմբի ղեկավար
Հեռ. 010-20-04-91